

Հրապոյրն անոր գեղանի
Կ'առինքնէ աչքերն անթարթ:

* * *

Աստղերը լուռ կը հային
Մութին մէջ մինչեւ առտու.
Նման ցաւոտ սրտերու,
Որ թողուած են առանձին:

Անշէջ հուրքով մը վառած
Կ'այրին անոնք յաւիտեան.
Իրենց վիշտը միշտ կու լան
Լոյս արցունքով տխրամած:

1902, Ղեկտեսքեր

6. ԱՐԵՒԱԳԱԼԸ

Հորիզոնէն վար լոյսի պար մը կ'իջնէ,
Ընդէլուզուած՝ ճաճանչներով ոսկեհիւս.
Շուտ կ'անհետի 1 մութն, ու խաւար 1 կու տայ խոյս,
Աշխարհ արփուոյն հուր գալուստը կ'ողջունէ:

Կենդանութիւն կը հագնին 1 դաշտ ու լեռներ,
Չուարթ 1 երգերը միշտ կը լսուին գեղջուկին.
Ու զմրուխտի 1, ադամանդի երանգներ^a
Կը փողփողին մէջը լոյսի վառ գըրկին:

Խորհուրդներու մըռայլը շուտ կը մարի,
Բընութեան այս հըրատ 1 զարթօնքին հանդէպ,
Ու կը հրճուի յուսահատ սիրտը կարի՛:

Կը սրբըւին թօնուտ աչքերը տըխուր,
Ուրախութեան ժպիտներուն տակ անհուն.
Յնծուն երգով կը լեցուի սիրտը թափուր:

1901, Յունիս